

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ազատ Եղիազարյան
Հայաստան

Գրականագիտությունը առնվազն երկու դեր ունի հայագիտության մեջ: Առաջինը բուն գրականության, իբրև ազգային մշակույթի ճյուղերից մեկի ուսումնասիրությունն է, դրա պատմության ստեղծումը: Չափազանց կարևոր խնդիր է, և պետք է ասել, հայ գրականագիտությունը ընդհանուր առմամբ լուծում է այդ խնդիրը: Այսօր մենք ունենք հայ գրականության զարգացման երեք մեծ շրջաններին՝ միջնադարյան շրջանին, նոր շրջանին և նորագույնին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ Հայաստանում և Սփյուռքում, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու հայ գրականության զարգացման, նրա համապատկերի մասին: Հիշենք վերջին տասնամյակներում լույս տեսած ամենահայտնի ուսումնասիրությունները: Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտը հրատարակեց հայոց նոր գրականության պատմության հիմնահատորյակը, որն իր տեսակի հանրագիտարան դարձավ 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայ գրականության: Այդ հրատարակությունն աննախադեպ էր և երևի երկար ժամանակ կմնա անգերազանցելի: Անցած տարիներին ինստիտուտը հրատարակեց նորագույն գրականության պատմությանը վերաբերող մի քանի աշխատություններ՝ «Խորհրդային հայ գրականության պատմություն» (1960, 1965), ապա՝ Սուրեն Աղաբաբյանի «Հայ խորհրդային գրականության պատմություն» երկհատորը (1986, 1993), որն իր ժամանակի համար լավագույն ընդհանրացնող աշխատությունն էր հայ գրականության այդ հատվածի մասին: Ափյուռքահայ գրականության մասին հրատարակվեց Գեղամ Սևանի «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր» (1980, 1996) դարձյալ երկհատոր ուսումնասիրությունը: Սևանի գիրքը, ինչքան ինձ հայտնի է, առաջին փորձն էր ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում, տալու սփյուռքահայ գրականության ամբողջական պատմությունը: Անթերի գործ էր, կուսակցականության երբեմն անհարկի սուր դրսևորումներով, բայց փաստական մեծ նյութ էր կուտակված այդ գրքում և, վերջապես, դա կարևոր սկիզբ էր:

Վերջերս Փարիզում ֆրանսերեն լույս է տեսել Գրիգոր Պլըտյանի մենագրությունը՝ նվիրված ֆրանսահայ գրողներին: Կարծում եմ, այս գիրքն էլ կարևոր ներդրում է հայ նորագույն գրականության ուսումնասիրության գործում:

Պետք է հիշել նաև Հրանտ Թամրազյանի՝ խորհրդային հայ գրականության պատմության դասագիրքը: Հասկանալի է, որ այս բոլոր ընդհանրացնող աշխատությունները գրված են բազմաթիվ մենագրությունների հիման վրա, որոնց մասին այստեղ խոսել հնարավոր չէ:

Անշուշտ, սա մի բնագավառ է, որտեղ վերջնական լուծումներ չեն կարող լինել: Գրականության պատմությունը կարիք ունի անընդհատ իմաստավորման ու վե-

րաիմաստավորման, և անգամ լավագույն աշխատություններն ինչ-որ պահի դադարում են բավարար լինելուց: Մանավանդ պատմական այնպիսի բեկումների պահին, ինչպիսին մեր ժամանակներն են, վերագնահատումներն անխուսափելի են դառնում: Եվ այսօր մենք տեսնում ենք նաև հայ գրականության պատմության բնագավառի խնդիրները:

Առաջին հերթին, այսօր մեզ պակասում է հին և միջնադարյան գրականության պատմությունը: Ժամանակին Մանուկ Աբեղյանը մեծ գործ արեց՝ ընդհանրացնելով այն տասնամյակներում հայտնի նյութը և ստեղծելով իր երկհատոր պատմությունը: Բայց դրանից հետո անցել է ավելի քան վեց տասնամյակ, հսկայական քանակությամբ նոր նյութեր են կուտակվել, փոխվել են մոտեցումները, որ միանգամայն բնական է: Եվ անհրաժեշտություն է առաջացել հայոց միջնադարյան գրականության նոր պատմության: Այստեղ, թերևս, անհրաժեշտ է մի վերապահում անել: Սկզբնաղբյուրների, միջնադարյան երկերի նկարագրությունն ու հրատարակությունն, անշուշտ, պետք է շարունակվի. իդեալականը պետք է լինի բոլոր տեքստերի ամբողջական հրատարակությունը: Բայց գործնականում դա անվերջ գործընթաց է: Մենք այսօր հսկայական փաստական նյութ ենք կուտակել հայոց միջնադարյան գրականության նոր պատմությունը շարադրելու համար:

Նոր գրականության ասպարեզում ևս նոր գնահատականների կարիք կա: Ամենակարևորն այդ շրջանի գրական զարգացման ներքին տրամաբանության հայտնաբերումն է: Մինչև 19-րդ դարի վերջը հայ գրականությունը գերազանցապես արևմտամետ գրականություն է՝ և իր ձևով, և իր բարձրագրած խնդիրներով: 20-րդ դարի սկզբին իրադրությունը փոխվում է: Եվրոպամետությունը կորցնում է իր տիրապետող նշանակությունը, ուժեղանում է հետաքրքրությունը Արևելքի նկատմամբ: Հայ գրականությունն իր ազգային ինքնությունն այլևս զուտ եվրոպական հատկանիշների մեջ չի փնտրում: Պատահական չէ, որ դարասկզբին վեպը, որն, անշուշտ, եվրոպական գրականությունից էր անցել մեզ, կորցնում է իր տիրապետող նշանակությունը:

Ամենից շատ խնդիրներ առաջացել են նորագույն շրջանի գրականության պատմության բնագավառում: Նախ, դեռևս չուսումնասիրված էջեր կան սփյուռքահայ գրականության մեջ: Վերաբեռնվորման կարիք ունեն հայաստանյան գրականության շատ ու շատ իրողություններ: Ապա, խիստ կարևոր է հայ նորագույն գրականության միասնության խնդիրը: Ես անծամբ չեմ կասկածում այդ միասնությանը: Նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբեմն ապշեցուցիչ ընդհանրություններ կան իրարից հեռու, քաղաքական միանգամայն տարբեր պայմաններում զարգացած, բայց միևնույն ժողովրդին պատկանող, միևնույն ժառանգությունը շարունակող երկու գրականությունների՝ հայաստանյան և սփյուռքահայ գրականությունների միջև: Իհարկե, չի կարելի աչքաթող անել նաև խոր և սկզբունքային տարբերությունները: Եվ այս երկու կողմերի հաշվառմամբ պետք է ստեղծել նորագույն հայ գրականության ամբողջական պատմությունը, որն, անշուշտ, դժվար աշխատանք կլինի:

Իբրև ընդհանուր խնդիր բոլոր շրջանների համար մնում է հայ գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում տեսնելը: Իմ տպավորությամբ, մեր գրականագիտական ուսումնասիրությունների ամենամեծ բացերից մեկն այն է, որ մենք քիչ ուշադրություն ենք դարձնում հայ գրականության միջազգային առնչություններին: Օրինակ, մենք հիմա բավական լավ գիտենք հայ միջնադարյան քնարերգության պատմությունը: Բայց մենք շատ քիչ ենք մտածել միջնադարի հայ բանաստեղծների և, մի կողմից՝ արևելյան, մյուս կողմից՝ եվրոպական միջնադարյան քնարերգության հարաբերությունների մասին: Այնինչ այդպիսի ուսումնասիրությունները, միջնադարի հայ բանաստեղծության համեմատությունները տրուբա-

դուրսերի, միջնագիծերի, պարսկական և հեռու ու մոտիկ Արևելքի միջնադարյան բանաստեղծության հետ շատ հետաքրքրական օրինաչափություններ պետք է բացեն հենց հայկական քնարերգության զարգացման մեջ:

Կարծում եմ, չափազանց կարևոր խնդիր է արևելյան և արևմտյան մշակույթների հետ հայ գրականության կապերի բնույթը: Հանգամանքների բերումով (այդ հանգամանքները ևս լուրջ ուսումնասիրության կարիք ունեն) մեր գրականագիտությունը գերազանցապես զբաղվել է հայ գրականության եվրոպական առնչությունների խնդրով: Ասենք, թուրքականի պոեմների մասին խոսելիս ավելի շատ փնտրել են նմանություններ Շեքսպիրի ողբերգությունների հետ: Չուզահեռներ են փնտրել Գյոթեի «Ֆաուստի» հետ: Սա էլ իր հիմքերն ունի: Բայց զարմանալիորեն քննության առարկա չի դարձել թուրքականի ստեղծագործության արևելյան հնարավոր արմատների խնդիրը: Նույնիսկ թուրքականի բազմաթիվ վկայությունները Արևելքի հանդեպ իր սիրո մասին, նրա երկու հռչակավոր քառյակները, որոնցում նա հակադրում է Արևելքը, այն անվանելով «հայրենիքը իմ հոգու», Արևմուտքին, որը նա բնութագրում է «էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի» և նման բառերով, նույնիսկ այս վկայությունները չեն հուշել նրա ստեղծագործությունը քննել նաև արևելյան հնարավոր կապերի տեսանկյունից:

Իրողությունն ինքնին շատ հետաքրքրական է ու բնորոշ մեր մտածողության համար: 19-րդ դարից սկսած մենք անընդհատ նայել ենք եվրոպայի կողմը, լուսավորություն ու փրկություն ակնկալել այնտեղից: Եվրոպան դարձել է չափանիշ զարգացման, ու մենք ամեն ինչ, իսկապես ամեն ինչ չափել ենք այդ չափանիշով: Այնքան, որ չենք էլ նկատել, որ 20-րդ դարի սկզբից մեր նշանավոր գրողները թուրքականը, Իսահակյանը, Ռուբեն Սևակը, Կոստան Ջառյանը և ուրիշները ջախջախիչ քննադատության են ենթարկել եվրոպան, հայացքը թեթև դեպի Արևելք:

Ունկնդիրները երևի կնկատեն, որ իմ բերած ցուցակում հիշվում են իրարից այնքան տարբեր գրողներ: Ի՞նչ ընդհանուր բան կարող էր լինել թուրքականի, որն Անդրկովկասից գրեթե դուրս չէր եկել, և եվրոպական կենտրոններում ձևավորված, եվրոպական մշակույթը խորապես ուսումնասիրած Կոստան Ջառյանի միջև, որն, ինչպես հայտնի է, բարձրից էր նայում թուրքականի ստեղծագործությանը: Բայց հետաքրքրական էլ հենց այդ է, որ իրարից այդքան տարբեր հայ գրողներ միակարծիք կամ գրեթե միակարծիք էին Արևմուտքի և Արևելքի խնդրում:

Ասածս չի նշանակում, որ հիմա էլ մենք պետք է մեր գրականության բոլոր երևույթները կապենք Արևելքի հետ: Դա հնարավոր չէ և իմաստ չունի: Մեր խնդիրը պետք է լինի հայ գրականության առանձնահատկություններին նայել ավելի լայն հայացքով, դրանք չլուծելով եվրոպական գրականության (ինչպես նաև ցանկացած այլ գրականության) հատկանիշների մեջ, և այս դեպքում չափազանց կարևոր է արևելյան առնչությունների հարցը, որը մեջտեղ է գալիս ոչ միայն 20-րդ դարի սկզբի, այլև 18-րդ և նախորդ դարերի կապակցությամբ նաև: Այսինքն՝ ինչպես մեր ամբողջ մտածողությունը, այնպես էլ գրականագիտությունը պետք է ազատվեն եվրոկենտրոնության միակողմանիությունից, նկատի առնեն համաշխարհային մշակույթի ողջ հարստությունը: Այդ է թելադրում, վերջապես, նաև մեր տեղը եվրասիայում:

Եթե փորձենք ի մի բերել ասվածը գրականության պատմության մասին, ապա պետք է խոսենք դրա խորացման և ընդհանրացումների անհրաժեշտության մասին: Պետք է իմաստավորել գրականության պատմության նյութը հայագիտության ընդհանուր խնդիրների տեսանկյունից, ծառայեցնել այդ նյութը ժողովրդի պատմության, հոգեբանության և արժեքների ըմբռնմանը:

Այդքան մեծ (և, իհարկե, արդարացված) ուշադրություն նվիրելով հայոց պատմության, ազգագրության, լեզվի և այլ փաստերին, մենք արդյո՞ք նույնքան ուշադիր ենք հայոց հոգևոր զարգացման, ազգային հոգեբանության, ժողովրդի կողմից

սեփական պատմության և առհասարակ սեփական կյանքի ընկալման հանդեպ: Այսինքն, այնպիսի իրողությունների հանդեպ, որոնց մասին նյութական վկայություններ չեն մնացել: Բայց, ի վերջո, այդ իրողությունները չափազանց կարևոր են մի ժողովրդի մասին ճիշտ գաղափար կազմելու, նրա հոգևոր կերպարն ու հոգեբանությունը ներկայացնելու համար: Այսինքն՝ դրանք հայագիտության բուն խնդիրներն են: Ահա այստեղ է, որ գրականագիտության դերն անփոխարինելի է: Առաջին հերթին հենց գրականագիտությունը պետք է բացահայտի ազգային ոգու զարգացման ընթացքը, հենվելով այն հսկայական նյութի վրա, որ տալիս է գեղարվեստական գրականությունը: Ցանկացած ժողովրդի գրականությունը նրա ազգային ինքնագիտակցության հայելին է: Բայց այս իրողությունն առավել քան ճշմարիտ է հայ գրականության դեպքում, որովհետև հայ գրականությունը, որոշակի և ոչ միշտ բարեբախտ հանգամանքների բերումով, ավելի մեծ դեր է կատարել հայոց կյանքում, ավելի սերտորեն է կապված եղել ժողովրդի կյանքի հետ: Հուսով եմ, ներկաներից ոչ ոք իմ ասածը չի համարի հայ գրականության գերազանցապես, այն ուրիշ գրականություններից վեր դնելու ցանկության արտահայտություն: Իմ նշած իրողությունը, ուրիշ շատ այլ իրողությունների նման, հայ գրականության առանձնահատկություններից մեկն է:

Եվ ահա, եթե մենք մեզ հարց տանք, թե հայ ժողովուրդն ինչպե՞ս է ընկալել իր պատմության իրադարձությունները, ապա այս հարցին պատասխանելու համար հայ գրականության մեջ հարստագույն և հետաքրքրագույն նյութ կգտնենք: Եվ առաջին բանը, որ մենք կնկատենք, գնահատականների և վերաբերմունքի բևեռացվածությունն է, որն արդեն ազգային հոգեբանության արտահայտություններից է: Իբրև կոնկրետ օրինակ, կարող ենք վերցնել Վարդանանց պատերազմի ընկալումը:

Ամբողջ նյութը ներկայացնելու հնարավորություն ես հիմա չունեմ: Այդ մասին ես գրել եմ իմ հոդվածներից մեկում («20-րդ դարի հայ գրականություն: Դեմքեր և խնդիրներ» գրքում): Այստեղ նշեմ ամենագլխավոր օրինաչափությունները: Ամբողջ միջնադարում Վարդանի և նրա զինակիցների գործը դիտվում է իբրև հավատարմության և հայրենասիրության բարձրագույն դրսևորում: Վարդանը հայոց ամենասիրված սրբերից մեկն է: Վասակը դավաճանության և ուրացողության զագրելի խորհրդանիշ է: 19-րդ դարում, մի կողմից, շարունակվում է դարերի այս գնահատականը (Ղևոնդ Ալիշան, Ռափայել Պատկանյան), մյուս կողմից, այս վերաբերմունքի մեջ ճեղքվածքներ են ի հայտ գալիս ((Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունները): 20-րդ դարում եղիշե Չարենցը կտրուկ փոխում է հայացքը Վարդանանց ապստամբության նկատմամբ, գնահատելով այն իբրև «սուտ մի Ավարայր» («Երկիր Նաիրի» վեպը, «Ջրահագնացք «Վարդան Չորավար» պոեմը): Երիտասարդ Դերենիկ Դեմիրճյանը ևս հակված չէր բարձրացնելու Վարդանին, նրա «Վասակ» պիեսում ամսքող համակրանք կա Վասակի հանդեպ:

Բայց 40-ականների կեսերին հայ ժողովուրդն անկեղծ ոգևորությամբ է ընդունում Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը, որը յուրատեսակ վերադարձ է 5-րդ դարում եղիշեի տված գնահատականներին: Այսինքն՝ խոսքը ոչ թե գնահատականների սրբագրումների մասին է, այլ այս կամ այն գնահատականի հիմնովին և արմատական մերժման մասին: Եվ այս ծայրահեղությունները տարածվում են ամբողջ հայոց պատմությանը տրվող գնահատականների վրա:

Դուք ծանոթ եք 20-30-ական թթ. Չարենցի պոեմներին՝ նվիրված հայոց պատմության տարբեր շրջաններին: Դրանց մեջ Չարենցը դառնությամբ մերժում է մեր ողջ նախընթաց պատմությունը: Հիշեցնեմ միայն անունները՝ «Վահագն», «Պատմության քառուղիներով», «Ջրահագնացք «Վարդան Չորավար», «Մահվան տեսիլ»: Բայց միայն Չարենցը չէր հայ գրողներից, որ այսպես էր նայում հայոց պատմութ-

յանը: Նրա գնահատականներին մոտենում են, երբեմն գրեթե բառացի, Հակոբ Օշականի խորհրդածությունները «Մնացորդացի» տարբեր գրքերում, «Հաճի Մուրադում» և այլ գործերում: Հիշեցնեն հատկապես թուրք փաշայի կողմից Մաթիկ Մելիքխանյանին հարցաքննելու տեսարանները: Անշուշտ, չենք կարող մոռանալ Շահան Շահնուրի դառնագին խորհրդածությունները «Նահանջում» և հրապարակախոսության մեջ, հատկապես «Մենքի» հայտարարության մեջ: Ժամանակի սղության պատճառով ես չեմ անդրադառնում 19-րդ դարի գրականության, մանավանդ Րաֆֆու խորհրդածություններին հայոց պատմության մասին, որոնց մեջ շատ բան կա Չարենցի և մյուսների մոտեցումներին նախորդող:

Բայց այս գնահատականները չէին կարող անպատասխան մնալ (ուղղակի և անուղղակի): Ներկաների մեծ մասին ծանոթ է երևի Վազգեն Շուշանյանի գիրքը ընդդեմ Շահան Շահնուրի «Մարդ մը, որն Արարատ չունի իր հոգվույն խորը»: Այդ գիրքը, բացի ուղղակիորեն Շահնուրի դեմ ուղղված զայրացկոտ հարձակումներից, պարունակում է նաև մեր պատմության յուրատեսակ վերլուծությունը, որի տրամաբանությունն ուղիղ հակառակն է Շահնուրի դատողությունների: Վազգեն Շուշանյանը փառաբանում է մեր պատմությունը և մշակույթը անկեղծ հայրենասիրությամբ, չընկնելով ազգային սնապարծության գիրկը:

Հայոց պատմության հանդեպ ժխտական վերաբերմունքի մերժման շատ հետաքրքրական արտահայտությունն էր Դեմիրճյանի ոչ միայն վեպը, այլև պատմագիտական «Վարդանանց ապստամբությունը» ուսումնասիրությունը և հրապարակախոսական հոդվածները: Բերեմ միայն շատ հետաքրքրական մի հատված պատերազմի տարիներին նրա գրած հոդվածից. «Հպարտություն է ծնվում մարդու մեջ, երբ մտածում ես, թե ինչպես ապրեց ու վերապրեց այս ժողովուրդը: Բնականն ու հնարավորն այն էր, որ նա իսկապես չպիտի ապրեր: Բայց և հրաշքով չէ, որ նա ապրեց: Ապրեց նա, դիմացավ, ունենալով դրա ուրիշ հիմքերն ու պատճառները»: Շարունակության մեջ Դեմիրճյանն ընդգծում է հատկապես հայ մշակույթի դերը հայության գոյատևման գործում և այս տեսակետը, հատկապես մեր օրերում, շատ հետաքրքրական ու կարևոր է: Բայց հիմա մեզ հետաքրքրողը նրա բերված միտքն է: *Բնականն ու հնարավորն այն էր, որ նա իսկապես չպիտի ապրեր:* Այս բնականն ու հնարավորը մեզ ստիպում են հիշել Չարենցի ստեղծագործությունը և Օշականի խոսքերը: Հայ ժողովուրդն իր գոյության ողջ ընթացքում կանգնած է եղել ֆիզիկական ոչնչացման եզրին: Սա է Չարենցի, Օշականի, Շահնուրի և ուրիշների դառնության արմատը: Բայց այն, ինչ ասում է Դեմիրճյանը, նրանց գնահատականների մերժումն է:

Շատ միամիտ բան կլիներ գիտական մտածողության համար, այսօր և առհասարակ, ընդունելով այս տեսակետներից որևէ մեկը՝ մերժել հակառակ տեսակետը: Երկուսն էլ ծնունդ են հայոց պատմության տրամաբանության, երկուսն էլ ծնվել են Հայաստանին մինչև վերջ նվիրված մարդկանց հոգիներում: Գիտության խնդիրը կարող էր լինել միայն ու միայն հասկանալը, ինչո՞ւ, ի՞նչ գործոնների ազդեցության տակ ծնվեցին այսքան իրարամերժ գնահատականներ, ի՞նչ չափով էին դրանք արտացոլում հայոց պատմության տրամաբանությունը: Եվ ավելի կարևորը՝ այս տրամադորեն իրար հակառակ մոտեցումների գոյությունը նույն ժողովրդի մտածողության մեջ, այս կամ այն փուլում դրանցից մեկի գերակայությունը ի՞նչ կապ ունեն հայոց ազգային հոգեբանության, դրա պատմական զարգացման հետ: